ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Գարրի Գարիկի Գասպարյանի «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում տնտեսական կառուցակարգի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բնապահպանական հիմնախնդիրների առաջացումը և դրանց ոչ համարժեք գնահատումն ու լուծումների առաջարկումը հանդիսանում է կլիմայի անկանխատեսելի փոփոխությունների գլխավոր պատճառներից մեկը:

Կլիմայի փոփոխությունը հանդիսանում է մարդկության առջև ծագաց ու հրատապ լուծման կարիք ունեցող ամենակարևոր հիմնախնդիրը: Ներկա պայմաններում կլիմայի փոփոխության հետևանքների շարքին են դասվում աննախադեպ երաշտները, ջրի պակասը, ուժեղ հրդեհները, ծովերի ջրի մակարդակի բարձրացումը, ջրհեղեղները, բևեռային սառույցների հալքը, ավերիչ ալեկոծությունները, հզոր փոթորիկները, անկառավարելի հրդեհները և այլն:

Հիմնախնդրի լուծման համար կազմվել է Կիոտոի արձանագրությունը, որը ընդունվել է 1997թ դեկտեմբերի 12-ին, իսկ վավերացվել 2005թ փետրվարի 16-ին՝ 192 երկրների կողմից: Կիոտոի արձանագրությունը ծառայում է ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության 1992թ հոկտեմբերի 5-ի շրջանակային կոնվենցիային՝ ապահովելով ներկայացված դրույթների զարգացում ու պարտավորեցնելով արդյունաբերական զարգացած երկրներին սահմանափակել ու կրճատել ջերմոցային գազերի արտանետումները՝ համաձայն ընդունված ազգային պարտավորությունների:

Կլիմայի փոփոխությանը նվիրված ՄԱԿ-ի 2012թ դեկտեմբերի 12-ին Դոհայում (Քաթար) կայացած կոնֆերանսում հաստատվել է Կիոտոի արձանագրության երկրորդ փուլը (2013-2020թթ), որտեղ բարձրացվեց պարտավորությունների մակարդակը և պայմանները: Շատ երկրներ չմասնակցեցին կոնֆերանսի աշխատանքներին, քանի որ

պետք է ներկայացնեին անհրաժեշտ տեղեկատվություն իրենց պարտավորությունների կատարման և դրանց մեծացման պլանի մասին: Պետք է ասել, որ արդյունաբերական զարգացած երկրների միջև բացակայում է միասնությունը տվյալ հիմնախնդրի համատեղ լուծման քաղաքականության մշակման հարցում:

Ներկա պայմաններում արդյունաբերական հասարակության հիմնախնդիրներից մեկը հանդիսանում է պայքարը այդ հասարակության կենսական ակտիվության հետևանքների հետ: Ընդ որում դժվարությունները և ռիսկերը, որոնք պետք է հաշվի առնվեն նոր հասարակության կողմից, չեն հանդիսանում տարածաշրջանային քաղաքականության ոլորտ, քանի որ տնտեսական ճգնաժամերը, տարերային աղետները, զանգվածային համաճարակները հանդիսանում են համաշխարհային նշանակության հիմնախնդիրներ:

Մթնոլորտային օդի աղտոտվածությունը հանդիսանում կլիմայի փոփոխության կարևորագույն պատճառներից մեկը և այդ տեսակետից բարձրացված հիմնախնդրի լուծումը համարվում է արդիական և ունի կարևոր համամարդկային նշանակություն:

Հիմնախնդրի լուծումը ունի շատ կարևոր նշանակություն մեր երկրի համար, քանի որ արտանետումների ծավալը մի քանի անգամ գերազանցում են հաստատված նորմերը, իսկ դրանց վերացման համար հատկացվող ֆինանսական միջոցները բազմակի անգամ զիջում են կատարվելիք ծախսերի մեծությանը:

Կատարված դիտարկումները հիմնավորում են հետազոտության թեմայի արդիականությունը և կարևորությունը բնակչության անվտանգության ու տնտեսության զարգացման ապահովման համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակը ՀՀ-ում մթնոլորտային օդի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի առկա հիմնախնիրների բացահայտումն ու դրանց լուծման հնարավոր ուղիների առաջադրումն է:

Ձևավորված նպատակի իրականացման համար ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել շրջակա միջավայրի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի տեսամեթոդական հիմունքներն ու առանձնահատկությունները մթնոլորտային օդի պահպանության համատեքստում,
- վերլուծել և հետազոտել մթնոլորտային օդի պահպանության տնտեսական գործիքակազմն ու դրա կիրարկման միջազգային փորձը,
- ուսումնասիրել մթնոլորտային օդի պահպանության ազգային տնտեսական կառուցակարգը և գնահատել դրա ապահոված էկոլոգատնտեսական արդյունքները,
- գնահատել ՀՀ-ում մթնոլորտային արտանետումների և տնտեսական աճի միջև փոխկապվածությունները,
- բացահայտել ավտոտրանսպորտային արտանետումների կարգավորման տնտեսական կառուցակարգի անկատարություններն ու մատնանշել դրանց վերացման հնարավոր ուղիներն ու կառուցակարգի բարեփոխման հնարավորությունները,
- անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումների կրճատում ապահովելու նպատակով առաջադրել գործադրվող տնտեսական կառուցակարգի կատարելագործման ճանապարհային քարտեզը և ուրվագծել կառուցակարգի զարգացման առաջնահերթությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ յուրաքանչյուրը բաղկացած երկու կետից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը, լուծվող խնդիրների շրջանակը, տեսական և մեթոդական հիմքերը, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, ստացված գիտական նորույթն ու հետազոտության գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի տեսամեթոդաբանական հիմնահարցերը», գլխում մթնոլորտային օդի պահպանության տեսանկյունից ներկայացվել են շրջակա

միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգի առանձնահատկությունները, տնտեսական գործիքակազմը և դրա կիրառման ժամանակակից միտումները:

Ներկայացվել են շրջակա միջավայրի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի էությունը, դերն ու առանձնահատկությունները, ընձեռած առավելություններն ու հնարավորությունները մթնոլորտային օդի պահպանության համատեքստում: Այս գլխում անդրադարձ է կատարվել նաև մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգի գործիքակազմին ու դրա կիրարկման միջազգային փորձին: Ներկայացված է շրջակա միջավայրի պահպանության կառավարման համակարգի տարրերը՝ վարչական ու տնտեսական կառուցակարգի տեսքով: Հեղինակը պնդում է, որ շուկայական տնտեսության պայմաններում շրջակա միջավայրի պահպանության հարցում տնտեսական կառուցակարգը ունի առանցքային դերակատարում, քանի որ նպաստում է առաջացող էկոլոգիական խնդիրների լուծմանը: Կախված իրականացվող բնապահպանական գործընթացների առանձնահատկություններից ներկայացված է շրջակա միջավայրի պաշտպանության տնտեսական կառուցակարգերի տեսակները և գործիքակազմը: Մթնոլորտային օդի պահպանության տնտեսական գործիքակազմը իրենից ներկայացնում է բազմաբաղադրիչ համակարգ և դրա համալիր կիրառումը հնարավորություն կտա ստանալու էկոլոգատնտեսական դրական արդյունքներ մթնոլորտային օդի պահպանության գործընթացում:

Երկրորդ՝ «ՀՀ-ում մթնոլորտային օդի պահպանության գործող տնտեսական կառուցակարգը և դրա արդյունավետության գնահատումը», գլխում կատարվել է մթնոլորտային օդի պահպանության ազգային տնտեսական կառուցակարգի առանձնահատկությունների վերլուծություն ու գնահատվել ՀՀ էկոլոգատնտեսական առկա վիճակը, վերլուծության է ենթարկվել ու գնահատվել մթնոլորտային արտանետումների վրա տնտեսության զարգացման գործոնի ազդեցությունը: Դիտարկվել են մթնոլորտային օդ կատարվող արտանետումների շարժընթացները և դրանք պայմանավորող հիմնական գործոնները, հասարակության բավարարվածության մակարդակը մթնոլորտային օդի որակով, վերլուծության են ենթարկվել բնապահպանական միջոցառումների պետական

ֆինանսավորման իրավական կարգավորման մոտեցումները և իրականացված փաստացի ծավալները, ներկայացվել է մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված նյութական խրախուսման ազգային փորձը և դրա ապահոված արդյունքները: Վերլուծության են ենթարկվել ու գնահատվել ՀՀ-ում մթնոլորտային արտանետումների և տնտեսության զարգացման միջև փոխկապվածությունները:

Երրորդ «Մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգի բարեփոխման գերակայությունները ՀՀ-ում», գլխում ներկայացված են ավտոտրանսպորտից մթնոլորտային արտանետումների տնտեսական կարգավորման կատարելագործման ուղիներն ու հնարավորությունները ՀՀ-ում, մթնոլորտային օդի վրա արտանետման անշարժ աղբյուրների բացասական ներգործության նվազեցման տնտեսական կառուցակարգի բարելավման ուղիներն ու զարգացման հեռանկարները ՀՀ-ում: Վերլուծության են ենթարկվել մթնոլորտային օդի պահպանության ազգային տնտեսական կառուցակարգի հիմնախնդիրները, ինչպես նաև ուրվագծվել են մթնոլորտային օդի պահպանության գործող տնտեսական կառուցակարգի զարգացման առաջնահերթությունները և վերջիններիս հիման վրա առաջարկվել մթնոլորտային օդի պահպանության ազգային տնտեսական կառուցակարգի կատարելագործման ուղիները:

Մարդատար ավտոտրանսպորտային միջոցների բնապահպանական հարկի գործող կարգի փոխարեն (ըստ շարժիչի հզորության) առաջարկվում է բնապահպանական հարկը որոշել ըստ շարժիչի աշխատանքային ծավալի, որը առավել նպատակահարմար է էկոլոգիական ազդեցության արդյունավետորեն հաշվառման տեսանկյունից, քանի որ արտանետումների և շարժիչի աշխատանքային ծավալի միջև կապն ավելի ուժեղ է: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ նորարարական տեխնոլոգիաներով ու լուծումներով կառուցված շարժիչները վառելիքի համեմատաբար ցածր ծախսով ունակ են ապահովել համաչափ հզորություն շարժիչի ավելի նվազ աշխատանքային ծավալի դեպքում:

Հաշվի առնելով հանրապետությունում արտանետման անշարժ աղբյուրներից անջատվող նյութերի որսման ցածր մակարդակը և տնտեսավարող սուբյեկտների կողմից օդապահպան միջոցառումների իրականացման նախաձեռնությունների բացակայությունը

առաջարկվում է բնապահպանական հարկի դրույքաչափերի բարձրացմանը զուգահեռ, արտանետումների կրճատման դիմաց, տնտեսվարող սուբյեկտներին տալ հարկային արտոնություններ:

Հայաստանում մթնոլորտային օդի պահպանության տնտեսական գործիքակազմի ողջ ներուժի իրացման և արդյունքում արտանետումների կրճատման համար բարենպաստ տնտեսական պայմանների ապահովման նպատակով առաջարկվում է արտանետումների թույլտվությունների առևտրի համակարգի (ԱԹԱՀ) տեղայնացման ծրագիր:

Ատենախոսության եզրակացությունների և առաջարկությունների բաժնում ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները և առաջարկությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ատենախոսության շրջանակում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքների հիման վրա որպես գիտական նորույթ են ներկայացված հետևյալ դրույթները.

- ՀՀ-ում մթնոլորտային արտանետումների վրա տնտեսական աճի ազդեցության գնահատման արդյունքում բացահայտվել են համախառն ներքին արդյունքի և մթնոլորտային օդ արտանետումների միջև առկա փոխառնչությունները:
- Ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետողների հարկման մեթոդական և համակարգային խնդիրների բացահայտման հիման վրա առաջարկվել է էկոլոգիական գործոնը հաշվառող բնապահպանական հարկման նոր կառուցակարգ:
- Բացահայտելով անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ արտանետումների կարգավորման տնտեսական կառուցակարգի անկատարությունները մշակվել է դրա գործիքակազմի կատարելագործման միջոցառումների համակարգ:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ատենախոսության կառուցվածքը սովորաբար ներկայացվում է կազմված երեք գլխից՝ յուրաքանչյուրը բաղկացած երեք կետից: Ներկայացված ատենախոսությունը բաղկացած է երեք գլխից՝ յուրաքաչյուրը բաղկացած երկու կետից:
2. Ատենախոսությունը կշահեր, եթե պատշաճ խորությամբ ուսումնասիրության ենթարկվեր մթնոլորտային օդի պահպանության բավականին սուր հիմնախնդրի լուծման ուղիները Երևան քաղաքում, որտեղ բնակվում է ՀՀ բնակչության զգալի մասը և թողարկվում արդյունաբերական արտադրանքի էական մասը:
3. Ատենախոսությունում ներկայացված երեք գիտական նորույթները պետք է խմբագրել, քանի որ չեն ներկայացվոած դրանց կիրառման արդյունքում սպասվող որակական փոփոխությունները:
4. Առաջին գիտական նորույթը հիմնված է մեկ գործոնից կազմված կորելյացիոն կապի վրա: Այդպիսի եզրահանգման կարելի է գալ առանց նման ռեգրեսիոն հավասարման կազմման: Նպատակահարմար կլիներ իրականացնել բազմագործոնային վերլուծություններ, որի դեպքում հնարավորություն կառաջանար կառավարելի դարձնել դիտարկվող գործընթացները:
5. Երկրորդ և երրորդ գիտական նորույթները ունեն առաջարկությունների տեսք:
6. Նպատակահարմար կլիներ և ատենախոսությունը կշահեր, եթե հեղինակի կողմից ներկայացվեր հիմնավորումներ էկոլոգիական հիմնախնդիրները կարգավորող միջազգային ստանդարտների ներդրման վերաբերյալ:
7. Ատենախոսությունում կան վրիպակներ, բացթողումներ, սխալ օգտագործված տերմիններ:

Ներկայացված դիտողությունները, այդուհանդերձ, չեն նվազեցնում կատարված հետազոտությունում ստացված արդյունքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գարրի Գարիկի Գասպարյանի կողմից հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսության թեման արդիական է: Ատենախոսությունում

ուսումնասիրության են ենթարկվել մթնոլորտային օդի պահպանության բնագավառում տնտեսական կառուցակարգի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում: Ատենախոսը կարողացել է ներկայացնել առաջադրված խնդիրների լուծման ուղիները: Ատենախոսության սեղմագիրը և հրապարակած հոդվածները բխում են աշխատանքի բովանդակությունից:

Ատենախոսությունում ստացված արդյունքներն ունեն գործնական և տեսական նշանակություն: Դրանք կարող են օգտակար լինել հիմնախնդրին նվիրված ուսումնական դասընթացների կազմակերպման, ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների հետազոտությամբ զբաղվող համապատասխան մասնագետների համար, ինչպես նաև կարող են կիրառվել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից հիմնախնդրի լուծման բարելավմանն ուղղված միջոցառումների մշակման ժամանակ:

Գարրի Գարիկի Գասպարյանի «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում տնտեսական կառուցակարգի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը իր արդիականությամբ, հիմնավորվածությամբ ու գիտական մակարդակով համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կարգի» յոթերորդ կետի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վ.Գ. Աբրահամյան
02 ապրիլ 2025թ

Պրոֆեսոր Վ.Գ. Աբրահամյանի
ստորագրությունը հաստատում եմ
ԵՊՀ գիտական խորհրդի քարտուղար
Մ.Վ. Հովհաննիսյան